

Պրոֆեսորներ բոլոր երկրների՝ միացե՛ք.

891.99

շ-26

ԳՈՒՐԳԷՆ ՀԱՅԿՈՒՆԻ

ԱՐՇԱԼՈՅՍԻ

ԵՐԳԵՐ

Հրատարակչ. ընկեր. «ԲԱՆԻՈ՞» № 1.

ԹԻՖԼԻՉ

19 NOV 2011

291-99

2-26

Պրոֆեսորների բոլոր երկրների միացիկ.

~~2-26~~

ԳՈՒՐԳԷՆ ՀԱՅԿՈՒՆԻ

ԱՐՇԱԼՈՅՍԻ

ԵՐԳԵՐ

12917 330

Երթանք անվերջ գոյութեան կուտ,
 Կոխն է կեանքի վսեմ պաշտամունք.
 Այնտեղ է համուր վեհ-կամքը կոփում,
 Ուր ձեռք ենք բերում եւ սուրբ իրատունք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

Հրատարակչ. Ընկեր. «Բանտոր» № 1
 ԹԻՖԼԻՉ

06 JUN 2013

37886

Այս երգերն, որպէս փունջ վարդալից,
Չեն դուզիլ իմ ճակատն, օ երբէք.
Բայց նրանք ծնւեցին արցունքից,
Արիւնից իմ սրտի վշտաբեկ...
Բարեսիրտ դու ընկեր, թէ կամիս,
Առ շրթերն այս արեան, արցունքիս:

(Գ. Նախուրովիչ.—Լ. Մելիքն)



1572-92

Тифлисъ, Типографія «МАМУЛЪ» Лорисъ-Мелик 22
1917

ՀԱՅԻՐ ՏԱԻԻՂ

Ասում են ինձ. «Երգիր, պօէտ,
«Երգիր, գարձն հոր կեանքի»,
«Եւ տաւիղի քո լարերով
«Դու մեր հոգին բորբոքի»
«Կարօտել ենք վառ յոյգերին,
«Հիւսիք երազ մեզ համար.
«Սեւտաբեր աչք լարերին
«Ջարկիր սրտով խանդավառ:
«Ջարկիր և մեր հպարտ հոգուն,
«Մենք երգ չունինք յուսահատ.
«Եւրծքերս բայց ու աննկուն
«Բեզ հետ երթանք անվհատ.
«Դու տարերքի հզօր կախարդ,
«Մենք փոթորիկ խելագար,
«Հնչիր մեզ հետ, անձեշ պօէտ,
«Առաջնորդիր մեզ պայքար:
Ես սիրեցի մորկայոյդ
Ամբոխը իմ հարսդատ.
Հնչիր, տաւիղ, գարնանայոյս,
Երգ՝ ք հպարտ ու ազատ:

ՔԱՂԱՔԸ

Արեւ մինչ շողում է նուրբ
քնքշանքով,
Առաւօտեան զեփիւռը մեղմ
օրօրում,
Հազարաւոր ճշակների
սուլոյցով
Ձուլում եմ ես անցորդների
շաւքերում:
Դէպ աշխատանք, դէպ գործարանն
ահագին,
Որ դիւահար շնչում է ծուխ
անդադար,
Որի կանչով թռնդ է տանում
մեր հոգին,
Բայլում ենք լուռ մենք ընկաւոր
ու հազար:
Էլէքտրաքարչն արագավազ
մեր մօտից
Թռչում է զիւ, անասելի
աղմուկով.
Դղրդացող անիւների
ճնշումից
Հեծում է պահ փողոցը խուլ
անէծքով:

„ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՎԵՐ“

Պօէմից

Եւ գործարաններ, ինչպէս աշտարակ
Առաստելական,
Հասել են ամպեր.
Ծխահաններով հրեղէն լափեր
Թանջում են արագ,
Քուլայ ու քուլայ ծխում հեհնէ —
Դժոխքը իջած անշէջ հնոցում.
Որովայնի մէջ մետաղ է ծծում.
Մշմշում է դէ,
Հազար գլխանի վիշապը դարձած,
Երկինք ու երկիր, շէնքերը հիմքից
Դողում են նրա շինդ-ալմուկից՝
Շնչերը սլահած:

189

Եւ հազար բանուր, հազար բանուր կին
Լուսաշաղի հեա դալիս են շարան
Դէպի գործարան:
Բազդից հալածւած, նրանք անմեկին,
Խոնաւ որջերում, հեռու ամենքից,
Քամում են մբուր՝ արիւն քրտինքով,
Երկաթ բազուկներ կլած իրար քով,
Իտար կարեկից —
Թշուաին միայն թշուառ է սիրում —
Անյաղթ շարքերով գործարաններում
Նրանք են ձուլում արծաթ ու ոսկի.
... Դարբնում առաւօտ ազատ դարունքի:

ԵՐԲ ՆԱԶԵՆ ՂՈՂԱՆՋՆԵՐ...

Երբ հնչեն ոսկեհուռ շեփորներ
անդադրում,
Որոտան մաքտակոչ զօղանջներ
բարձունքից,
Դարևոր թշնամուն արիւնոտ
պայքարում,
Դէմ ելէք հաւազպտ եղբայրներ
վշտակից:

...Վարդաշող արեւելք խաւարից
լուսանայ,
Մինչ գիշեր մուկգին կը հանգչի
հոգեվար,
Փոթորիկ շարքերով մարտնչէք
դուք անհ...
Նոր կեանքի արշալոյս ձեզ նայի
ոսկեվառ:

ՊԱՃՏԱՍՈՒՆՔ ԱՐԵԻՆ

Կապուտան ծովի գրկից՝ ոսկեհիւս
Ծնւում է փայլուն կենաց արշալոյս,
Դարևոր կղզու աւերակներում
Արևորդիներ ծունկ են խոնարհում:

Ծունկ են խոնարհում նրանք միասին,
Ողջոյնի ելած արևի լոյսին.
Երկաթ կուրծքերից, պապակ շուրթերով,
Թնդում է օրհներգ կղզու ափերով:

«Ծագիր, արփի, նորոգ կեանքի,
«Գարնանափայլ երկունքի,
«Որ տիեզեր զարթնի նորից
«Քո կենսատու շողերից:

«Ո՛ր հուրաչեայ, ծով երկունքով,
«Մագերդ բոց, երկնածիր,
«Սնամահ վահագ, հուր շփոյգով
«Երկնակամար սլացիր:

«Արևորդիք, առէք ջահեր,
«Ելնենք հանդէպ անվեհեր.
«Արևահար, թո՛ւ զէմքերով
«Իմենք հզօր շարքերով:

Ծուծ գիշերից չը վհատիք
Նորոգ կեանքի երկունքին.
Հզօր շարքեր, արևորդիք,
Ծունկ խոնարհէք արեգին:

ԻՄ ՈՒՂԻՆ ԱՆՅԱՅՏ

(1905 Մեծ Յեղափոխութեան հերոսներէ յիշատակին)

Անցնում եմ ուղին անյայտ ու ծանօթ,
Ուղին հինաուրաց բացւած իմ առաջ,
Նա թէ ինձ համար հեռու է, թէ մօտ,
Փոյթ չէ որ հեռու... Ես կերթամ առաջ:

Տեսնում եմ հանդէպ խութեր անհամար,
Հողքիս խոր անդունդ, երախով անկուշտ.
Ուղիս կորսւած... Որո՞շ ինձ համար.
Փոյթ չէ որ աւեր... Ես կերթամ առաջ:

Կերթամ ես առաջ իմ խաւար ճամբով,
Ի՞նչ շող լուսատու գիշերն ինձ ընկեր.
Պարզւում է նոր-նոր մի անցեալ աղօտ,
Հեռից լսելի հնչում են երգեր:

«Փշեր ու մացառ մաքրեցինք ձեռքով,
«Ուղի բացւեցաւ արեւնով կաթ—կաթ.
«Ժայռից էլ անյաղթ, կանգնած իրար քով,
«Կածան հանեցինք կրճերով երկաթ:

«Այտերս գունատ քրտնում էր արիւն,
«Մնում էր ծիւեր խորշակից ազատ.
«Ծաղկով քաղցրարոյր բացում էր գարուն...
«Մըրիկ բարձրացաւ. ու ընկանք զատ-զատ:

«Կայծակ որոտաց փայլով դիւկան,
«Մեր շուրջը տիրեց աւերման ոգին.
«Հեղեղ բարձրացաւ, ժայռեր փուլ եկան,
«Հսկայ պատուարներ դէմ եկան կրկին ..

Անցնում եմ. հանդէպ խուժիր տնհամար.
Կողքիս խոր անգունդ՝ երախով անկուշտ.
Ուղիս կորսւած... Որոշ ինձ համար.
Փոյթ չէ որ աւեր... Ես կերթամ առաջ:

ՁԵՂ ԱՒԵՏԵՄ ԱՐՇԱԼՈՅՍ

Կուզէի որ արժիւ լինեմ,
Արժւից հզօր ու ազատ.
Ազատ շնչով ես սաւառնեմ
Բարձունքներում հարազատ:

Բարձունքներից որոտայ հրդ,
Որոտայ երգ լեռնայոյդ.
Ե՛րգս հնչէ սիրուն համերգ,
Ձեզ աւետէ արշալոյս:

Կուզէի որ լինեմ կայծակ,
Շողամ կապոյտ եթերում.
Իջնեմ երկնից ու համարձակ
Մեխեմ սարի կուրծքերում:

Սարից, հզօր, դժուր խոխոջամ,
Որ ծաւալեմ անեղեր.
Ծով-տարերքից ես մոնչամ
Ու ողորկեմ տիեզեր...

Այն ովկիանից ծագի նորեկ,
Անմահ արեգ, սիրոյ լոյս.
Ղարիբ, ընկեր, ոտքի՛ ելէք,
Ձեզ աւետեմ արշալոյս:

ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ

12412

ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆ



NL0336212

37886

25 407

Тифли, Вельяминовская № 4

зубному врачу Г. Карагюляну.

Изд. Редакція "Пайкаръ,"